

ՍՈՒԲՅԵԿՏԻՎՆ ՈՒ ՕԲՅԵԿՏԻՎՆ ԻԲՐԵՎ ՀԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄ. ՆՈՐ ՀԱՅԱՑՔ ԴԱՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻՆ

ՄԿՐՏԻՉ Ս. ՄԿՐՏՉՅԱՆ

Մարդու աշխարհընկալման սուբյեկտիվ և օբյեկտիվ տարբերակումը միշտ էլ հետաքրքրել է փիլիսոփաներին, նշանագետներին ու որոշ չափով՝ նաև լեզվաբաններին: Ավելին, սուբյեկտիվ իմաստը տարբեր լեզվաբաններ տարբեր կերպ են մեկնաբանում, և որպես հետևանք՝ սուբյեկտիվ իմաստի՝ որպես լեզվաբանական երևույթի մասին տեսակետները տարբեր բնույթ են ստանում տարբեր լեզվաբանների մոտ: Տարբեր են նաև այն տեսակետները, թե լեզվաբանական տեսանկյունից ով է առաջինը ձևակերպել սուբյեկտիվ իմաստի մասին գաղափարը: Ընդ որում, իմաստի սուբյեկտիվ և օբյեկտիվ լինելը երբեմն բացահայտ, երբեմն էլ ոչ այդքան բացահայտ առկա է այն աշխատություններում, որոնք քիչ թե շատ վերաբերում են բառի գործածությանը: Թերևս Էդուարդ Ադայանն այն սակավաթիվ հայ լեզվաբաններից է, որ առանձին անդրադարձ է կատարել բառի սուբյեկտիվ իմաստին՝ տարանջատելով այն դեպքերը, երբ օբյեկտիվ հասկացություն նշանակող բառի իմաստը ձեռք է բերում սուբյեկտիվ իմաստ կամ իմաստային երանգավորում: Ըստ այդմ՝ սույն հոդվածը նպատակ ունի նախ քննել սուբյեկտիվ իմաստի ըմբռնումը լեզվաբանության մեջ, նկարագրել Վ. Ֆոն Հումբոլդտի, Շարլ Բալիի և Էմիլ Բենվենիստի մոտեցումները խնդրի շուրջ, այնուհետև սուբյեկտիվի ու օբյեկտիվի, սուբյեկտիվության և միջսուբյեկտիվության հարաբերությունները ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից (Լանգակեր, Նույց) և վերջապես՝ ներկայացնել Էդուարդ Ադայանի հայացքները բառի սուբյեկտիվ իմաստի դրսևորման վերաբերյալ, որոնք արտացոլվել են նրա տարբեր տարիների աշխատություններում:

Բանալի բառեր – իմաստային հակադրություն, սուբյեկտիվի ու օբյեկտիվի հակադրություն, միջսուբյեկտիվություն, հաղորդակցություն և խոսք, Էդուարդ Ադայան

Հարուստ մշակութային անցյալ ունեցող ցանկացած լեզու հաղորդակիցներին տալիս է հաղորդակցվելու, սեփական մտքերն արտահայտելու բազմաթիվ միջոցներ: Եվ այդ միջոցները կարող են տարբեր դրսևորումներ ունենալ՝ հնչերանգից մինչև նախադասության շարադասություն: Երբեմն միևնույն բառը կարող է լինել չեզոք, հաղորդակցման մասնակիցներին լիովին ըմբռնելի, իսկ երբեմն էլ կարող է հանդես գալ իբրև տարբեր իմաստներով հագեցած հաղորդագրություն: Անշուշտ, այստեղ կարևոր դեր ունի այն հանգամանքը, թե ինչպես է հասցեատերն ընկալում այդ հաղորդագրությունը՝ որպես սուբյեկտի վ,

թե՞ օբյեկտիվ: Բնականաբար հասկանալի է, որ լեզուն հասարակական երևույթ է, և հասարակության անդամների համաձայնությամբ են լեզվի բառերի որոշ իմաստներ համարվում սուբյեկտիվ կամ օբյեկտիվ: Ավելին, հասարակության զարգացման ու փոփոխության հետ փոփոխվում են նաև այդ հասարակության համար հաղորդակցման միջոց ծառայող լեզվի սուբյեկտիվ կամ օբյեկտիվ իմաստները: Այս առումով դեռ 19-րդ դարում փիլիսոփա, լեզվաբան Ալեքսանդր Պոտեբնյան գրել է. «Օբյեկտիվ և սուբյեկտիվ հասկացությունները հարաբերական են, և, անկասկած, կգա ժամանակ, երբ այն, ինչ մեզ թվում էր որպես բնության առանձնահատկություն (свойство), կպարզվի, որ մեր ժամանակի հայացքի հատկանիշն է միայն»¹:

Լեզվաբանական ուսումնասիրությունների ժամանակ բացահայտորեն կամ ոչ այդքան բացահայտ միջոտ էլ անդրադարձ է կատարվել լեզվի գործառույթի և իմաստի ձևավորման գործում մարդու ունեցած դերին: Այդ մոտեցումները նույնքան տարբեր էին, որքան այն տեսությունները, թե ով է առաջինը բացահայտորեն անդրադարձել սուբյեկտիվությանը՝ որպես լեզվաբանական խնդրի: Այսպես, խորհրդային լեզվաբաններն այդ դերը հիմնականում վերագրում էին գերմանացի փիլիսոփա, լեզվաբան Վիլհելմ ֆոն Հումբոլդտին², իսկ անհա ֆրանսիացի լեզվաբաններ Պատրիկ Շարոդոն ու Դոմենիք Մենգրնոն շեշտում են, որ լեզվաբանական ուսումնասիրություններում սուբյեկտիվության գործոնին՝ իբրև իրական լեզվական խնդրի, առաջինն անդրադարձել է Էմիլ Բենվենիստը³:

Սույն հոդվածը համառոտ ակնարկ է սուբյեկտիվության և օբյեկտիվության ըմբռնմանն ինչպես արտասահմանյան լեզվաբանների տեսություններում, այնպես էլ հայ լեզվաբանների աշխատություններում և հատկապես Էդուարդ Ադայանի աշխատություններում, քանի որ այս հոդվածով նաև փորձ է արվում հասկանալու Ադայանի մոտեցումները իմաստի սուբյեկտիվությանը՝ ի համեմատ մյուս լեզվաբանների տեսությունների:

Սուբյեկտիվ իմաստի ըմբռնումը լեզվաբանության մեջ

Ըստ Վիլհելմ ֆոն Հումբոլդտի՝ լեզվի էությունը սուբյեկտիվության առաջնայնությունն է⁴: Նա ընդգծում է, որ իրերը սուբյեկտիվ լեզվի միջոցով են ընկալվում: Ընդ որում, բառը ոչ թե առարկայի դրոշմն է, այլ «մեր հոգում այդ առարկայի ստեղծած պատկերի»⁵: Ապա շեշտում է, որ ցանկացած օբյեկտիվ ընկալմանն անխուսափելիորեն խառնվում է

¹ Потебня А. Эстетика и поэтика, М., 1976, с. 205.

² Ст'ю Колшанский Г. В. Соотношение субъективных и объективных факторов в языке. М., 1975, էջ 5:

³ Ст'ю Charaudeau, P., Maingueneau, D., Dictionnaire d'analyse du discours. Paris, 2002, էջ 552:

⁴ Ст'ю Гумбольдт В. фон Язык и философия культуры. М., 1985, էջ 406:

⁵ Гумбольдт В. фон Избранные труды по языкознанию. М., 1984, с. 80.

սուբյեկտիվը, յուրաքանչյուր մարդկային անհատականություն, նույնիսկ անկախ լեզվից, կարելի է համարել աշխարհընկալման առանձնահատուկ տեսակետ (позиция): Նա նշում է, որ այս տեսակետը առավելապես ձևավորվում է հենց լեզվի շնորհիվ:

Հումբոլդտն այն կարծիքին էր, որ յուրաքանչյուր ազգ ինքն է իր լեզվում ներդնում օբյեկտիվ իրականության կամ էլ սուբյեկտիվության չափաբաժինը⁶: Մարդն օբյեկտիվ իրականությունն ընկալում է սուբյեկտիվ ճանապարհով, և դա տեղի է ունենում միայն լեզվի միջոցով: Հումբոլդտը գրում է. «Ճանաչելիության նկատմամբ լինելով սուբյեկտիվ լեզուն օբյեկտիվ է մարդու նկատմամբ, քանի որ յուրաքանչյուր լեզու մարդու ընդհանուր էության արձագանքն է»⁷:

Սուբյեկտիվության խնդրին անդրադարձել է նաև Շարլ Բալին, որը նշում է, որ իրական խոսքում (parler) ուշագրավն այն է, որ այդտեղ արտահայտված միտքը *սուբյեկտիվ, կոնկրետ և հուզական* բնույթ ունի⁸: Բալին գտնում է, որ ինքնաբուխ խոսքը երբեք օբյեկտիվ չի լինում, և այն մտքից անբաժան է, ընդ որում խոսողը գլխավորապես արտահայտում է ոչ թե մտքեր ու դատողություններ, այլ իր տպավորությունն այդ իրերից: Լեզվաբանն ընդգծում է, որ եթե ինքնաբուխ, կենդանի միտքը անհատական է, ապա լեզուն համընդհանուր է, քանի որ արտահայտված մտքերն ու արտահայտման միջոցները տարբեր բաներ են⁹: Այսինքն՝ պետք է եզրակացնել, որ լեզուն ունի սուբյեկտիվ արտահայտման բոլոր միջոցները, սակայն անհատի ինքնաբուխ խոսքում է այդ լեզուն դառնում սուբյեկտիվ, և, ինչպես Բալին է շեշտում, անհատական խոսքը հասկանալի է դառնում հանրությանը միայն ու միայն լեզվական միջոցների շնորհիվ¹⁰: Ավելին, երբեմն անհատական լեզվի ու համընդհանուր լեզվի բաժանարար գիծը, ըստ Բալիի, վերացական է: Ըստ այդմ՝ կենդանի խոսքի սուբյեկտիվությունը պայմանավորում է խոսակցական լեզվի կոնկրետ լինելը, քանի որ սովորական մարդուն օտար է վերացարկումը: Եվ վերջապես, խոսակցական լեզուն հիմնականում հուզական (affectif) է¹¹:

Այսինքն՝ Բալին գտնում է, որ հաղորդակցության ժամանակ ինքնաբուխ խոսքը սուբյեկտիվ է, քանի որ խոսողը ժամանակ չի ունեցել խորհելու ու նոր արտահայտվելու, ընդ որում, խոսակցի մտքի կամ խոսքի սուբյեկտիվության աստիճանը պայմանավորված է տվյալ լեզվի հասարակական բնույթով և մտքի արագ փոխանցման անհրաժեշտությամբ: Բալին գրում է. «Անշուշտ, առանձին վերցրած յուրաքանչյուր խոսող անձ մտավոր կամ հուզական առումով կարող է էական-

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 104:

⁷ Նույն տեղում, էջ 320:

⁸ Տե՛ս **Bally Ch.**, *Traité de stylistique française*, Vol 1, 3^{ème} ed. Genève, Paris, 1951, էջ 271:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 287:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 288:

րեն տարբերվել մյուսից, սակայն այս հարցում մեկ անգամ ևս դրսևորվում է մեզ հետաքրքրող միտումների հավաքական բնույթը. արագ, ամբողջական հաղորդակցության կենսական անհրաժեշտությունը հանգեցնում է անհատական հատկանիշների հավասարեցմանը»¹²:

Եվ ուրեմն՝ ինքնաբուխ խոսքը, լինելով սուբյեկտիվ, պետք է հասկանալի լինի հաղորդակցության մյուս մասնակցին կամ մասնակիցներին: Իհարկե, Բալին ոճագիտության տեսանկյունից է մոտենում սուբյեկտիվությանը. սուբյեկտիվությունը նա մեծ մասամբ դիտարկում է ինքնաբուխ խոսքում:

Այլ մոտեցում է դրսևորում ֆրանսիացի հայտնի լեզվաբան Էմիլ Բենվենիստը: Նա իր «Լեզվի սուբյեկտիվության մասին» հոդվածի առաջին պարբերությունը սկսում է հարցով. «Եթե լեզուն, ինչպես ընդունված է ասել, հաղորդակցության գործիք է, ապա ինչի ն է այն պարտական իր այդ հատկության համար»¹³: Ապա քննելով լեզվի դերը հաղորդակցության ժամանակ՝ փաստում է, որ լեզվի համեմատությունը նյութական, մարդու կողմից ստեղծված գործիքի հետ պետք է անվստահություն ներշնչի մեզ: Բենվենիստը գրում է. «Խոսել գործիքի մասին նշանակում է մարդուն հակադրել բնությանը: Բահը, նետը, անիվը բնության մեջ չկան: Մրանք պատրաստել է մարդը: Մինչդեռ լեզուն մարդու էության (nature) մեջ է, և մարդը չի պատրաստել այն»¹⁴:

Այնուհետև Բենվենիստը նշում է, որ խոսքը (parole) լեզվի առկայացումն է, քանի որ հաղորդակցման գործառույթ իրականացնելու համար այն պետք է ունենա լեզվի «լիազորությունը»: Նա գրում է. «Հենց լեզվում և լեզվի միջոցով է մարդը սահմանվում իբրև *սուբյեկտ*, քանի որ միայն լեզուն է արտացոլում իրականությունը, *իր* իրականությունը, որը նաև *լինելու* իրականությունն է, որտեղ էլ ստեղծվում է «Ego»-ի հասկացությունը»¹⁵:

Բենվենիստն ընդգծում է, որ «սուբյեկտիվությունը» խոսողի ունակությունն է իրեն ներկայացնելու որպես «սուբյեկտ»: Ավելին, գիտնականը շեշտում է, որ «այդ «սուբյեկտիվությունը» դիտարկում ենք թե՛ ֆենոմենոլոգիայի, թե՛ հոգեբանության տեսանկյունից, այն ընդամենը լեզվի հիմնարար հատկության դրսևորումն է մարդ էակի մեջ: «Ego» է նա, ով *ասում* է «ego»: Այստեղ գտնում ենք «սուբյեկտիվության» հիմքը, որը որոշվում է «դեմքի» լեզվական կարգավիճակով»¹⁶:

Բենվենիստի համար սուբյեկտիվությունն առկայանում է լեզվի միջոցով, և հենց լեզուն է մարդուն հնարավորություն տալիս ինքնագիտակցությունը դրսևորելու: Ընդ որում, այդ ինքնագիտակցությունը դրսևորվում է միայն հակադրության ժամանակ: Այդ հակադրությունը

¹² Նույն տեղում, էջ 288:

¹³ Benveniste E. Problèmes de linguistique générale, Vol. 1. Paris, 1966, p. 258.

¹⁴ Նույն տեղում, էջ 259:

¹⁵ Նույն տեղում, էջ 260:

¹⁶ Նույն տեղում, էջ 259:

տեղի է ունենում առաջին հերթին անձնական դերանուններ գործածելիս, քանի որ խոսողի «ես»-ը հաղորդակցության ժամանակ դառնում է «դու», երբ նրան է դիմում նրա հաղորդակիցը, որն էլ իր հերթին է ներկայանում որպես «ես»: Բենվենիստն այս առնչությամբ գրում է. «Լեզուն հնարավոր է միայն այն պատճառով, որ յուրաքանչյուր խոսող անձ/խոսակից իր խոսքում իրեն ներկայացնում է որպես *սուբյեկտ* (sujet), որն ինքն իր խոսքում իրեն ներկայացնում է որպես *ես*: Այդ պատճառով էլ *ես*-ը ներկայանում է որպես այլ անձ, որը, բացարձակապես արտաքին լինելով իմ «ես»-ից, դառնում է իմ արձագանքը, որին ասում եմ դու, որն էլ իր հերթին ինձ է դու ասում»¹⁷:

Բենվենիստը նշում է, որ թեև անձնական դերանունները սուբյեկտիվության առաջին հենակետերից են, նրանցից բացի, խոսքում (discours) գոյություն ունեն նաև ցուցայնության (deixis) այլ ցուցիչներ, ինչպես օրինակ *այս, այստեղ, հիմա, վաղը* և այլն, և որոշ բայեր, օրինակ *կարծել, ենթադրել*, որոնք որոշակիություն են ստանում խոսքի ժամանակ, այսինքն՝ կախված են խոսողից, նրա «ես»-ից¹⁸:

Սուբյեկտիվությունն ըստ ճանաչողական լեզվաբանության

Ճանաչողական լեզվաբանության մեջ սուբյեկտիվությունը արտացոլվում է լեզվական արտահայտության մեջ, քանի որ վերջինս ոչ միայն նշանակում է, այլ նաև ներառում է, թե տվյալ իրավիճակը կամ երևույթը ինչպես է ընդունում և ըմբռնում խոսողը¹⁹: Այս երևույթը նկարագրելու կամ բացատրելու համար Ռոնալդ Լանգակերը ներմուծում է *մեկնաբանություն* (mental construing): Նա իր առաջ քաշած հասկացությունն այսպես է մեկնում. «Մեկնաբանությունը (construal) նույն իրավիճակն այլընտրանքային ձևերով պատկերացնելու և պատկերելու մեր կարողությունն է: [...] Արտահայտության իմաստը կախված է ինչպես հայեցակարգային բովանդակությունից (conceptual content), այնպես էլ այդ բովանդակության մեկնաբանությունից: Բովանդակությունը մոտավորապես համեմատելի է ճշմարտության պայմանների, իրերի վիճակի կամ նկարագրված օբյեկտիվ իրավիճակի հետ»²⁰:

Լանգակերը ընդգծում է, որ աշխարհը չի դրոշմվում մեր ուղեղում, ավելին, աշխարհի ընկալումը (conception) իրականում երբեք չեզոք չի լինում, այլ ենթադրում է մտավոր գործունեություն, որն էլ ձևավորվում է տվյալ անձի փորձից (previous experience), ունակություններից (capabilities), պահի ընկալման իրավիճակից:

Ըստ Լանգակերի՝ նկարագրված իմաստի սուբյեկտիվությունը և օբյեկտիվությունը ավելի ակնառու են դառնում տեսակետի դեպքում: Նրա

¹⁷ Նույն տեղում, էջ 260:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 262:

¹⁹ Տե՛ս **Скребинова Т.** Когнитивная лингвистика. Классические теории, новые подходы. М., 2018, էջ 155:

²⁰ **Langacker R. W.**, "Chapter 6: Construal". In: E. Dąbrowska, D. Divjak (eds.), Cognitive Linguistics - Foundations of Language, Berlin. Boston, 2019, p. 140.

կարծիքով՝ առավելագույն օբյեկտիվության հասնում են այն ժամանակ, երբ դիտարկման օբյեկտն ունի հստակ սահմաններ և առանձնացված է դիտարկողից և գտնվում է նրա տեսադաշտում, իսկ առավելագույն սուբյեկտիվությունն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ դիտարկողը տարրալուծվում է դիտարկման օբյեկտում: Միտքը պարզաբանելու համար նա բերում է թատրոնի հանդիսատեսի ու բեմի ներկայացման օրինակը. որքան շատ է դիտողը տարվում խաղով, այդքան շատ է տարրալուծվում խաղում: Լանգակերը բերում է նաև ակնոցի օրինակը. միայն ակնոցը հանելուց է ընդգծվում ակնոցի՝ որպես օբյեկտի դերը, իսկ ակնոցը կրելիս այն դառնում է դիտարկվող սուբյեկտի մաս²¹:

Ինչպես արդեն նշվեց, սուբյեկտիվությունը կարող է դրսևորվել կախված այն բանից, թե խոսողն ինչպես է մեկնաբանում օբյեկտիվ իրականությունը: Լանգակերի օրինակներից է նաև, թե խոսողն ինչպես է նկարագրում լամպի ու սեղանի հարաբերությունը. լամպը սեղանի վրա՝ է, թե՛ սեղանն է լամպի տակ, որն էլ նման է այն օրինակին, որին հաճախ դիմում են՝ նկարագրելու կիսատ բաժակի պարունակությունը՝ բաժակը կիսով չափ դատարկ է, թե՛ կիսով չափ լիքը:

Սուբյեկտիվության և օբյեկտիվության հարաբերությանը ավելանում է ևս մեկ տարր՝ միջսուբյեկտիվություն (intersubjectivity), որը ենթադրում է, որ օբյեկտիվ իրականության մասին սուբյեկտիվ պատկերացումը պատկանում է հաղորդակցության մասնակիցներից յուրաքանչյուրին: Նյուցի ներկայացմամբ՝ սուբյեկտիվության և միջսուբյեկտիվության տարբերությունը որոշվում է այն չափանիշով, թե խոսողը որքան պատասխանատվություն է ստանձնում իրականությունը/փաստերը (evidence) գնահատելիս. լիակատար պատասխանատվություն (personal responsibility), թե՛ այդ գնահատականին համաձայն են նաև ուրիշները (միջսուբյեկտիվություն)²²: Իսկ ահա Բենվենիստը գտնում է, որ լեզվական հաղորդակցությունը հնարավոր է միջսուբյեկտիվության (intersubjectivité) առկայության դեպքում միայն²³:

Այսինքն՝ սուբյեկտիվը միայն հաղորդողին է պատկանում, միջսուբյեկտիվ իմաստը՝ հաղորդակցության մասնակիցներին, իսկ օբյեկտիվը, կարելի է ասել, հատուկ է տվյալ հասարակության մեծամասնությանը, և սրա շնորհիվ է, որ հաղորդակցությունը տեղի է ունենում կամ էլ ավելի տեղին է ասել՝ հաջողությամբ է պսակվում:

Սուբյեկտիվ իմաստի ըմբռնումը հայ լեզվաբանների աշխատություններում

Շայ լեզվաբանների աշխատություններում սուբյեկտիվությանը՝ որպես քննության առարկայի, շատ քիչ են անդրադարձել, այն էլ առավելապես ոճագիտության տեսանկյունից՝ իբրև վերաբերմունքի, գնա-

²¹ Տե՛ս **Langacker R. W.**, *Cognitive Grammar: A Basic Introduction*, Oxford, 2008, էջ 77:

²² Տե՛ս **Nuyts J.**, *Epistemic modality, language, and conceptualization: A cognitive pragmatic perspective*, A., 2001, էջ 75:

²³ Տե՛ս **Benveniste, E.**, նշվ. աշխ., էջ 266:

հատության արտահայտման միջոցի. օրինակ՝ Պողոս Պողոսյանը տարանջատում է սուբյեկտիվության վերաբերմունք արտահայտող և չարտահայտող համանիշներ և այլն²⁴:

Գևորգ Ջահուկյանը նախադասության կադապավորման տեսանկյունից է անդրադառնում օբյեկտիվ ու սուբյեկտիվ իմաստին: Ջահուկյանը գրում է. «Նախադասությունը այն միավորն է, որի մեջ հանդես են գալիս լեզվական բոլոր իմաստները և ձևերը», իսկ «յուրաքանչյուր նախադասության բովանդակություն ստացվում է օբյեկտիվ ու սուբյեկտիվ որոշ կողմերի դրսևորմամբ»²⁵: Ընդ որում, սուբյեկտիվը հաղորդման ժամանակ դառնում է օբյեկտիվ: Այսպես է Ջահուկյանը մեկնում այս երևույթը. «Օբյեկտիվ առումով նախադասության բովանդակությունը իրական աշխարհի որևէ հարաբերության արտահայտություն է՝ լինի այդ հարաբերությունը նյութական թե հոգեկան բնույթի. հոգեկան բնույթի լինելու դեպքում այն հանդես է գալիս որպես հաղորդման օբյեկտ, այսինքն՝ սուբյեկտիվն օբյեկտիվանում է: Սուբյեկտիվ առումով նախադասությունը բնորոշվում է որոշ իրադրությամբ (սիտուացիայով), որը ոչ այլ ինչ է, եթե ոչ հաղորդման հարաբերությունը դեպի արտահայտողը (հաղորդողը), հաղորդակիցը, հաղորդման առարկան և հաղորդման ընդհանուր շղթան (կոնտեքստը)»²⁶:

Սուբյեկտիվ իմաստի ավելի ընդգրկուն մոտեցում կարելի է նկատել Էդուարդ Աղայանի աշխատություններում: Եվ այսպես, բառերի իմաստները, ըստ Աղայանի, հասկացություններ անվանելուց զատ, «արտահայտում են օբյեկտիվ առարկաների, երևույթների և այլնի նկատմամբ մարդկանց ունեցած վերաբերմունքը, նրանց հասարակական գնահատությունը»²⁷: Աղայանը պնդում է, որ «մարդն ակտիվորեն է ճանաչում» առարկաները և իր վերաբերմունքն է արտահայտում դրանց նկատմամբ²⁸: Եվ որպես հետևանք՝ բառը, (օբյեկտիվ) հասկացություն անվանելուց բացի, արտահայտում է նաև որոշակի վերաբերմունք: Այսինքն՝ Աղայանը նշում է, որ բառի իմաստը ներառում է օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստներ: Օբյեկտիվը գոյություն ունեցող երևույթների ու առարկաների անվանումներն են, իսկ սուբյեկտիվը՝ այդ երևույթների, առարկաների (որոնց Աղայանն անվանում է հասկացություններ) նկատմամբ մարդկանց, հասարակության ունեցած վերաբերմունքն ու գնահատանքը: Ընդ որում, Աղայանն ընդգծում է, որ օբյեկտիվ առարկաներն ու հատկանիշները իրենց արտահայտած իմաստով նույնական չեն: Նա գրում է. «... օբյեկտիվ առարկաները գործընթացները,

²⁴ Տե՛ս Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները (խոսքի տեսություն), Գիրք Ա, Եր., 1990, էջ 189:

²⁵ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 22:

²⁶ Նույն տեղում, էջ 22-23:

²⁷ Է. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 35:

²⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 35:

հատկանիշները և այլն նույնպես իրենց դրսևորումների մեջ բացարձակապես նույնական չեն. միևնույն երևույթը կարող է ունենալ բուռն կամ թույլ, դուրեկան կամ տհաճ դրսևորումներ և այլն, և այլն: Այս բոլորը, բնականաբար, արտացոլվում են բառի մեջ, առարկաների, երևույթների հատկանիշների և այլնի հասկացություններն օժտելով զանազան երանգավորումներով, վերաբերմունքով, գնահատությամբ»²⁹:

Արդ, բառն արտահայտում է օբյեկտիվ իրականությունը, երևույթները, ինչպես նաև մարդկանց սուբյեկտիվ վերաբերմունքն ու գնահատականը, բայց այդ օբյեկտիվ իրականությունը, երևույթը կարող են նաև տարբեր դրսևորումներ ունենալ: Այսինքն՝ տարբեր բառեր միևնույն հասկացությունը կարող են տարբեր կերպ նկարագրել: Աղայանի օրինակներից մեկը **ուսուցիչ** և **վարժապետ** բառերի տարբերությունն է, որտեղ **ուսուցիչը** չեզոք կամ էլ դրական իմաստ է արտահայտում, իսկ **վարժապետը**՝ արհամարհական, բացասական իմաստ³⁰:

Աղայանը շեշտում է, որ որոշ հասկացություններ, առարկաներ կարող են մարդկանց մոտ առաջացնել վատ կամ լավ հիշողություններ, գուգորդվել դժբախտության կամ ուրախության հետ: Ինչպես վերևում արդեն նշվեց, Աղայանը շեշտում է, որ մարդն ակտիվորեն է ճանաչում իրեն շրջապատող աշխարհը և որպես արդյունք՝ երևույթներն ու հասկացությունները, իրենց հիմնական իմաստից զատ, կարող են արտահայտել նաև երանգավորված իմաստ՝ բացասական կամ դրական: Աղայանը բերում է **օձի** և **մեղվի** օրինակները, համապատասխանաբար՝ բացասական և դրական երանգավորում ունեցող, հավելյալ իմաստով օժտված բառեր, որոնք, արտահայտելով օբյեկտիվ հասկացություններ, միևնույն ժամանակ արտահայտում են նաև մարդու վերաբերմունքը դրանց նկատմամբ: Սա էլ Աղայանն անվանում է բառի սուբյեկտիվ իմաստ³¹:

Սուբյեկտիվ իմաստի առաջացման առնչությամբ Աղայանը մատնանշում է. «Բառիմաստի սուբյեկտիվ տարրը կարող է առաջանալ բառի գործածության, իմաստի, գործառական հատկանիշների, պատմական զարգացման ու փոփոխությունների հետևանքով, բայց կարող է նաև հենց բառի ու նրա արտահայտած իմաստի գոյացման գործընթացում ծագել որպես տվյալ հասկացության հիմք»³²: Ավելին, բառի փոխաբերական իմաստով գործածության արդյունքում տեղի է ունենում իմաստափոխություն, և բուն իմաստին ավելանում են զգացական վերաբերմունք արտահայտող իմաստներ: Իր միտքը պարզաբանելու համար լեզվաբանը բերում է **ուտել** և **խժռել** բայերի օրինակները, որտեղ առաջինը չեզոք է, իսկ երկրորդը՝ բացասական երանգավորմամբ: Մինչդեռ **ուտել** բայը, լինելով չեզոք, փոխաբերաբար կարող է նաև բա-

²⁹ Նույն տեղում:

³⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 36:

³¹ Տե՛ս նույն տեղը:

³² Նույն տեղում, էջ 36-37:

ցասական իմաստ արտահայտել, օրինակ՝ «յուրացնել, վատնել»³³:

Բառերի հավելյալ իմաստները, բնականաբար, առաջանում են ժամանակի ընթացքում, որն էլ կարծես արտացոլում է այն, թե ինչպես է հասարակության մեծ մասը բառը գործածել ինչ-որ առարկա, երեւոյթ, իսկ ավելի հաճախ՝ մարդկանց նկարագրելու համար: Եվ թերևս սա է պատճառը, որ Աղայանը շեշտադրում է, որ «հասկացության գոյացման պրոցեսում որոշ օժանդակ դեր կարող են կատարել նաև առարկայի ձևը, գույնը և ուրիշ արտաքին հատկանիշներ, մանավանդ այն դեպքում, երբ բառային անվանում է տրվում չճանաչված, հետևաբար պրակտիկ գործունեության մեջ չգիտակցված առարկային կամ երևույթին»³⁴: Բայց և այնպես, ժամանակի ընթացքում վերոհիշյալ հատկանիշները երկրորդական պլան են մղվում: Աղայանն այսպես է բացատրում տվյալ երևույթը. « ... հասարակական գործունեության զարգացման հետ ու նրա շնորհիվ առարկաների արտաքին հատկանիշները, որպես նրանց ճանաչման աղբյուր, մտածողության ու լեզվի զարգացման ավելի բարձր աստիճաններում ետին պլանն են մղվում: Ուստի և՛ երբ խոսվում է հասկացության սուբյեկտիվ բնույթի մասին, պետք է նկատի ունենալ առարկաների, երևույթների և այլն հասարակության կյանքում ունեցած դերը ու պիտանիությունը, մարդկանց հարաբերությունը դրանց հետ և դրան համապատասխան գնահատությունը»³⁵:

Աղայանը պնդում է, որ մարդիկ արտաքին առարկաները ճանաչում են դրանց հետ կրկնվող հարաբերությունների շնորհիվ և դարձնում «գիտակցության սեփականությունը՝ այդ առարկայի հասկացությունը պարունակող անվանումներով՝ բառերով և ոչ թե առարկաների պատկերացումներով»³⁶: Ընդ որում, պատկերացումը նախորդում է հասկացության գոյացմանը, քանի որ « ... նախքան առարկայի հասկացությունը կազմելը, մենք պրակտիկ գործունեության մեջ ընկալում ենք այդ առարկաները՝ զգայության միջոցով, կազմում ենք նրանց պատկերացումները, և այդ կոնկրետ ընկալումների ու պատկերացումների հիման վրա կազմում ընդհանուր և վերացած հասկացություն»³⁷:

Ավելին, Աղայանն ընդգծում է, որ ձևի ու բովանդակության միասնությունը առաջանում է հենց բառի ծագման ընթացքում, որն էլ արտացոլվում է բառիմաստի հիմքում, իսկ «բառիմաստը տվյալ լեզվական հանրության կողմից հասարակական գործունեության շնորհիվ օբյեկտիվ իրականության սուբյեկտիվ ճանաչողությունն է, արտահայտված բառային ձևով»³⁸:

³³ Նույն տեղում, էջ 38:

³⁴ Նույն տեղում, էջ 41:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում, էջ 41-42:

³⁷ Նույն տեղում, էջ 42:

³⁸ Նույն տեղում:

Իսկ մեկ այլ տեղ Աղայանը գրում է, որ «... բոլոր վերաբերմունքները, որոնք արտահայտվում են բառերի մեջ՝ նրանց իմաստի հիմքը կազմող հասկացության հետ միասին, սուբյեկտիվ տարրն են կազմում և կոչվում են բառի սուբյեկտիվ իմաստ»³⁹: Իսկ ինչ վերաբերում է սուբյեկտիվ իմաստի դերին, ըստ Աղայանի, այն կարող է բազմաբնույթ դրսևորումներ ունենալ և արտահայտել քաղաքական-գաղափարախոսական վերաբերմունք, կամ գեղագիտական, սովորության (ավանդական), կենցաղային գնահատություն, կամ էլ «կարող է բխել առարկայի (երևույթի, հատկանիշի և այլնի) էությունից (մարդու համար վնասակար կամ օգտակար), կարող է լոկ հասարակական ըմբռնումներից, նախապաշարումներից և այլնից բխել»⁴⁰:

Եվ անհա, արդեն դասական աշխատություն համարվող «Լեզվաբանության հիմունքներ»-ի՝ բառագիտությանը վերաբերող գլխում Աղայանն առանձին անդրադարձ է կատարում զգացական (էմոցիոնալ) խոսքին: Ամփոփելով արդեն օբյեկտիվ ու սուբյեկտիվ իմաստի վերաբերյալ մտքերը՝ Աղայանը բառն ու նրա արտահայտած իմաստը տեղափոխում է խոսք, այսինքն՝ հաղորդակցություն: Նա նշում է, որ մարդն իր ներքին աշխարհը դրսևորում է լեզվում և դրա համար էլ «բառերը կոնկրետ խոսքի մեջ իրենց գործածությամբ արտահայտում են ոչ միայն օբյեկտիվ իրականության առարկաների ու երևույթների հասկացությունները, այլ հաճախ՝ նաև մարդու վերաբերմունքն այդ առարկաների ու երևույթների նկատմամբ»⁴¹: Եվ որպես հետևանք՝ այդ բառը, ունենալով օբյեկտիվ իմաստ, արտահայտում է նաև սուբյեկտիվ իմաստ, այսինքն՝ խոսողի վերաբերմունքը: Աղայանը գրում է. «... բառի իմաստն ընդգրկում է երկու մոմենտ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ. օբյեկտիվն այն ընդհանուրն է, որ բառն ունի անկախ կերպով, որպես տվյալ առարկայի (երևույթի և այլն) ընդհանուր հասկացություն, իսկ սուբյեկտիվն այն է, որ բառը տվյալ խոսքի մեջ արտահայտում է խոսողի վերաբերմունքը հենց այդ առարկայի (երևույթի և այլն) նկատմամբ: Սրանից էլ բխում է այն, որ խոսքի մեջ բառերը հանդես են գալիս ոչ միայն իբրև **մտքի նշաններ**, այլև՝ իբրև **զգացական նշաններ**՝ արտահայտելով խոսողի վերաբերմունքը, հոգեվիճակը, ցանկությունը և այլն»⁴²:

Հետաքրքիր է, որ Աղայանը շեշտում է լսողի դերը բառի սուբյեկտիվ կամ օբյեկտիվ ընկալման ժամանակ: Նա ոչ բացահայտ առաջադրում է համագործակցության գաղափարը խոսողի ու լսողի միջև. «Սովորական խոսակցության ժամանակ էլ լսողը կարող է գաղափար կազմել խոսողի հոգեկան վիճակի մասին, արտահայտվածի նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքի մասին՝ դատելով խոսողի բառերի

³⁹ **Գ. Բ. Ջահուկյան, Է. Բ. Աղայան** և այլք, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Եր., 1980, էջ 212-213:

⁴⁰ Նույն տեղում, էջ 213:

⁴¹ **Է. Բ. Աղայան**, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 355:

⁴² Նույն տեղում:

ընտրությունից, նրանց դասավորությունից, հնչերանգից և այլն: Խոստովն էլ ձգտում է այդ բանին, այսինքն՝ աշխատում է լսողին հաղորդել իր վերաբերմունքը, իր այս կամ այն զգացմունքը, հոգեկան ապրումները՝ կապված իր արտահայտածի հետ»⁴³:

Բնականաբար, լսողի դերը կարևոր է բառի, խոսքի սուբյեկտիվության կամ օբյեկտիվության ընկալման առումով, քանի որ եթե տվյալ բառը խոսողի կողմից գործածվում է սուբյեկտիվ կերպով, ապա այդ «համագործակցության» բացակայության պարագայում լսողը կարող է չընկալել խոսողի միտքը՝ չհասկանալ նրա վերաբերմունքը, գնահատականն ու օբյեկտիվ իրականությունը և շփոթել մեկը մյուսի հետ:

Որպես հետևանք՝ Աղայանը պնդում է, որ լեզվում ստեղծվում է երկու համակարգ՝ բառիմաստների (հասկացությունների) արտահայտության համակարգ և զգացմունքների արտահայտության համակարգ, և լեզուն այս երկու համակարգերի միասնությունն է⁴⁴:

Աղայանը գտնում է, որ իր մտածածն ու զգացմունքները արտահայտելու համար «խոսողը դիմում է **հավելադիր բառերի (դե, էլի, է, լա՛վ և այլն), հնչերանգի, կրկնությունների** օգտագործմանը և, վերջապես, նույնիսկ «աղավաղումների»⁴⁵: Ինչպես նաև Աղայանն ավելացնում է, որ վերաբերմունք արտահայտելու համար հաճախ են գործածվում հակադրությունները, երբ ասում են մի բան, բայց իմաստը լրիվ հակառակն է. *լա՛վ էս ասում* (=լավ չես ասում, ասածդ ինձ դուր չի գալիս), *շա՛ն խելոքն էս* (= շատ խելոք չես), *մե՛ծ բան է* (= մեծ բան չէ) և այլն:

Աղայանը շեշտադրում է, որ մեր ապրումները, վերաբերմունքը, ցանկության դրսևորման միջոցները բազմազան են, սակայն դրանք չպետք է նույնացնել պատկերավոր կամ բանաստեղծական մտածողության հետ, քանի որ վերջինս արտահայտում է «օբյեկտիվը ավելի վառ, տպավորիչ գույներով, մինչդեռ զգացականն արտահայտում է սուբյեկտիվը, անհատականը՝ առանց փոխելու օբյեկտիվի էությունը»⁴⁶: Ընդ որում, Աղայանն ընդգծում է, որ սուբյեկտիվը ոչ թե անկախ, ինքնաբավ միավոր է, այլ՝ հասարակական, քանի որ յուրաքանչյուր մարդ հասարակության անդամ է և իր մեջ է կրում տվյալ հասարակությանը հատուկ հոգեբանությունն ու գիտակցությունը, և ուրեմն այդ զգացականն էլ է հասարակական:

Եզրակացություն

Լեզուն, լինելով կենդանի օրգանիզմ և հաղորդակցման միջոց, բազմաթիվ միջոցներ է ստեղծում աշխարհը և այդ աշխարհում տեղի ունեցող երևույթները նկարագրելու համար: Ավելին, լեզվի հասարակական բնույթը, հաղորդակցման միջոց լինելը շեշտելուց զատ, պետք է նաև ընդգծել, որ հաղորդակցությունը հաջողություն է ունենում, երբ

⁴³ Նույն տեղում, էջ 355- 356:

⁴⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 356:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Նույն տեղում, էջ 357:

դրա մասնակիցները հասկանում են իրար, այսինքն՝ տեղի է ունենում երկխոսություն: Այդ երկխոսության համար կարևոր է, որ լսողը կարողանա ըմբռնել խոսողի հաղորդագրության սուբյեկտիվ ու օբյեկտիվ կողմերը: Իսկ երբ ինչ-որ երևույթի, մարդու կամ առարկայի նկարագրության ժամանակ տրված գնահատականները հասկանալի են հաղորդակցության մասնակիցներին, ապա կարելի է ասել, որ խոսքը, վերաբերմունքը, գնահատականը հաղորդակցության օբյեկտի հանդեպ միջսուբյեկտիվային են:

Այսպիսով, լեզվաբանության մեջ սուբյեկտիվության ու օբյեկտիվության վերաբերյալ մոտեցումները հիմնականում տարբեր են, և դրանք երբեմն ուսումնասիրվում են իմաստաբանության, իսկ ավելի հաճախ՝ ոճագիտության տեսանկյունից: Սակայն ինչպես Գիրոն է ասում. «... ոճագիտության և իմաստաբանության միջև միջոց կլինի ընդհանուր սահման, որը դժվար կլինի սահմանագծել, քանի որ դրանք երկու փոխլրացող ու սերտորեն կապված գիտություններ են»⁴⁷:

МКРТЫЧ С. МКРТЧЯН – Субъективное и объективное как проявление оппозиции: новый взгляд на классические подходы. – Субъективная и объективная дифференциация человеческого восприятия мира всегда интересовала философов, семиотиков и отчасти лингвистов. Более того, субъективное значение интерпретируется разными лингвистами по-разному, и, как следствие, взгляды на субъективное значение как на языковое явление принимают у разных лингвистов разный характер. Существуют также различные взгляды на то, кто первым сформулировал идею субъективного значения с лингвистической точки зрения. В то же время субъективный и объективный характер значения иногда эксплицитно, а иногда и имплицитно присутствует в работах, которые более или менее относятся к употреблению слова. Пожалуй, Эдуард Агаян — один из немногих армянских языковедов, обративших внимание на субъективное значение слова с семантической точки зрения и подчеркнувших случаи, когда значение слова, обозначающее объективное понятие, приобретает субъективное значение и субъективную семантическую окраску. Соответственно, данная статья имеет целью сначала рассмотреть понимание субъективного значения в лингвистике, затем описать подходы В. фон Гумбольдта, Шарля Бали и Эмиля Бенвениста к проблеме, отношения между субъективным и объективным значением, субъективностью и интересубъективностью с точки зрения когнитивной лингвистики (Лангакер, Ньюц), и не в последнюю очередь представить взгляды Эдуарда Агаяна на проявление субъективного значения слова, которые нашли отражение в его работах разных лет.

Ключевые слова: семантическое противопоставление, субъективное и объективное противопоставление, межсубъективность, коммуникация и речь, Эдуард Агаян

МКРТԻՇ Տ. ՄԿՐՏՇՅԱՆ – Subjective and Objective as a Manifestation of Opposition: a New Perspective on Classical Approaches. – The subjective and objective differentiation of human perception of the world has always interested philosophers, semioticians, and to some extent linguists. Moreover, subjective meaning is interpreted differently by different linguists, and as a consequence, the views of subjective meaning as a linguistic phenomenon take on a different character among different lin-

⁴⁷ Guiraud P., La Sémantique [3^e éd.]. Paris, 1962, p. 117.

guists. There are also different views on who first formulated the idea of subjective meaning from a linguistic point of view. At the same time, the subjective and objective nature of the meaning is sometimes explicitly and sometimes implicitly present in the works that more or less refer to the use of the word. Perhaps Eduard Aghayan is one of the few Armenian linguists who paid attention to the subjective meaning of the word from a semantic perspective and underlined the cases when the word meaning denoting an objective concept acquires subjective meaning and subjective semantic coloring. Accordingly, this article aims first to examine the understanding of subjective meaning in linguistics, then to describe V. Von Humboldt's, Charles Bali's, and Emile Benveniste's approaches to the problem, the relations between subjective and objective meaning, subjectivity and intersubjectivity from the point of view of cognitive linguistics (Langacker, Nuyts), and last but not least to present Eduard Aghayan's views on the manifestation of the subjective meaning of the word, which was reflected in his works of different years.

Key words: *semantic contrast, subjective and objective opposition, intersubjectivity, communication and speech, Eduard Aghayan*